

**ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄՈՋՄՈՒՆՔՆԵՐԸ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ
ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԴԱՇՆԱԳՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ
ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ**

Մտքի, խղճի և կրոնի ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, ինչը հիմնավորվում է նրանով, որ կրոնական անհանդուրժողականության պատճառով տեղի են ունեցել լայնածավալ վայրագություններ, այն է՝ մարդկության դեմ հանցագործություններ, ցեղասպանություն և ռազմական հանցագործություններ²: Հայոց պատմության էջերում կարող ենք տեսնել, թե ինչ վայրագություններ են տեղի ունեցել կրոնական անհանդուրժողականության պատճառով. Ավարայրի ճակատամարտը, Մեծ եղեռնը, Արցախյան պատերազմի ժամանակ Ադրբեջանի կողմից հայկական եկեղեցիների և վանքերի ոչնչացումը և այլն:

Պատմությունը ցույց է տալիս, որ հենց նման վայրագության և կրոնական անհանդուրժողականության դեմ պայքարելու համար, ինչպես նաև կրոնի ազատությունը, մարդու արժանապատվությունը և համաշխարհային խաղաղությունն ու կայունությունը³ պահպանելու նպատակ ունի, միջազգային հանրությունը որոշել է ստեղծել միջազգային այնպիսի փաստաթղթեր և մեխանիզմներ, որոնք կապահովեն մտքի, խղճի և կրոնի ազատությունը: Հենց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Համընդհանուր հռչակագիրն է հանդիսանում այն միջազգային փաստաթուղթը, որտեղ առաջին անգամ ամրագրվել է անձի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը:

¹ ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Վ. Վ. Քոչարյան:

² St' u Leila Nadya Sadat, Religious Freedom and American Foreign Policy: The united States Commission on International Religious freedom, էջ 2 // <http://www.nesl.edu/userfiles/file/nejicl/vol9/textvol9no1.pdf>:

³ St' u նույն տեղը, էջ 3:

Հայաստանի Հանրապետությունում այդ հիմնարար ազատությունը նույնպես քննադատությունների է ենթարկվում ինչպես հասարակության կողմից, այնպես էլ տարբեր ոլորտի մասնագետների կողմից⁴:

Պետությունը ունի պոզիտիվ պարտավորություն՝ պաշտպանել յուրաքանչյուր անձի մտքի, խղճի և կրոնի ազատությունը անհանդուրժողական և խտրական վերաբերմունքից⁵: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումների մեջ նշում է, որ հիմնարար սկզբունքը, որի հիման վրա ստեղծված է պոզիտիվ պարտականությունների մասով նախադեպային իրավունք՝ պետական մարմինների կողմից կրոնի ազատության բազմակարծության և փոխադարձ հանդուրժողականության ոգով գոյատևելը ապահովելն է⁶:

Ստքի, խղճի և կրոնի ազատության բովանդակությունը մանրամասն ներկայացված է ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ ՔՔԻՄԴ) 18-րդ հոդվածում, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ, կամ Կոնվենցիա) 9-րդ:

Ստքի, խղճի և կրոնի ազատությունը ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածում: Հայաստանի Հանրապետությո՝

⁴ Տե՛ս, օրինակ՝ XXI դարի կրոնական մարտահրավերները և Հայաստանը: Գիտաժողովի նյութեր / ԵՊՀ, Աստվածաբանության ֆակ. - Երևան: ԵՊՀ հրատ, 2011, էջ 153: (Աճեմյան մատենաշար; ԺԴ): Տե՛ս «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» հետազոտություն //ԵԱՀԿ երևանյան գրասենյակ// <http://www.osce.org/hy/yerevan/74895?download=true>:

⁵ Տե՛ս UN Human Rights Committee (HRC), *CCPR General Comment No. 22: Article 18 (Freedom of Thought, Conscience or Religion)*, § 8 // 30 July 1993, CCPR/C/21/Rev.1/Add.4, Guidelines on the promotion and protection of freedom of religion or belief, Foreign Affairs Council meeting , Luxembourg, 24 June 2013, § 22:

⁶ Տե՛ս 97 members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and 4 others v. Georgia, §§138-142, Handbook on freedom of conscience an religious belief, p 28 (The fundamental principle driving the case-law on positive obligations is the duty on the part of state authorities to ensure that religious liberty exists within a spirit of pluralism and mutual tolerance. The authorities must respond appropriately to protect adherents of religious faiths from religiously-motivated attacks, and when such attacks have occurred, to do what is reasonable in the circumstances to collect and secure the evidence, explore all practical means of discovering the truth and deliver fully reasoned, impartial and objective decisions, without omitting suspicious facts that may be indicative of a religiously induced violence):

յունում գործում է նաև հատուկ օրենք՝ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», որը ընդունվել է դեռևս 1991 թվականի հունիսի 17-ին: Օրենքը հստակ չի սահմանում թե ինչպես և ինչ միջոցով կարող տարբեր կրոն դավանող անձինք արտահայտել իրենց կրոնական համոզմունքները, ինչը պրակտիկայում բերում է քննադատությունների և հակասական կարծիքների ստեղծմանը: Բացի այդ, «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» չափանիշը օրենքում բացակայում է, և դա նկատելիորեն նվազեցնում է իրավական պաշտպանության արդյունավետությունը:

Մտքի, խղճի և կրոնի ազատությունը կարելի է տեսականորեն բաժանել երկու մասի: Առաջինը՝ դա անձի մտքի, խղճի և կրոնի ազատությունն է, որը անհատական, անձնական ազատությունն է, և, հետևաբար, յուրաքանչյուր մարդու միտքը, խիղճը և կրոնը չի կարող հարկադրաբար թելադրվել այլ անձանց կամ պետության կողմից: Այդ անձնական իրավունքը տեսության մեջ կոչվում է նաև «պասիվ» ազատություն⁷ կամ, ինչես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «ներքին»⁸ իրավունք (*forum internum*)⁹: Ընդ որում, ՔՔԻՄԴ-ի 18-րդ հոդվածով, ինչպես նաև ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի իմաստով «կրոն» են համարվում նաև աթեիզմը¹⁰, պացիֆիզմը¹¹, վեգանիզմը, ինչպես նաև կոմունիզմը՝ որպես քաղաքական գաղափարա-

⁷ Տե՛ս M. Todd Parker, Freedom to manifest religious belief: An analysis of the necessity clauses of the ICCPR and the ECHR, էջ 94 // Duke Journal of Comparative & International Law, Vol. 17:91, էջ 91-129:

⁸ Տե՛ս Overview of the Court's case-law on freedom of religion // Research division, Council of Europe, էջ 8, պարագրաֆ 16:

⁹ Տե՛ս TÜRMEN, R., «Freedom of conscience and religion: Promoting justice, human rights and conflict resolution through international law» (La promotion de la justice, des droits de l'homme et du règlement des conflits par le droit international: liber amicorum Lucius Cafilisch) / edited by Marcelo G. Kohen. - Leiden: Martinus Nijhoff, 2007, էջեր 591-600:

¹⁰ Տե՛ս Angelini v. Sweden, Application no. 10491/83, 51 DR 41 at 48 (1986) //

<https://www.yumpu.com/en/document/view/22464400/angelini-v-sweden-religion-and-law-consortium>; Human Rights Comm, General comment No. 22: The Right to Freedom of Thoughts, Conscience and religion (Art. 18), կետ 2 // UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add/4 (July 30, 1993), <http://www.refworld.org/docid/453883fb22.html>:

¹¹ Տե՛ս Arrowsmith v UK, Application no 7050/75, 12 June 1977, պարագրաֆ 1 // <http://www.strasbourgconsortium.org/common/document.view.php?docId=4490>

խոսություն¹²: Չնայած որ նիհիլիզմի, պանթեիզմի և նատուրալիզմը, ինչպես նաև այլ աշխարհայացքների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գործեր չեն քննվել, միևնույն է կարծում ենք, որ այդ աշխարհայացքները նույնպես պաշտպանված են ԲԲԻՄԴ-ի 18-րդ և ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածներով:

Մտքի, խղճի և կրոնի ազատությունը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել այդ համոզմունքները արտահայտելու դեպքում: Կրոնական համոզմունքները արտահայտելը կրում է հանրային բնույթ, և, համապատասխանաբար, հանդիսանում է «արտաքին»¹³ իրավունք (*forum externum*)¹⁴: Սահմանափակման ենթակա է ազատության «ակտիվ» կամ «արտաքին» մասը, քանի որ միտքը, խիղճը և կրոնը արտահայտելու ազատությունը կարող է անմիջական կապ ունենալ այլ անձանց իրավունքների հետ¹⁵:

Անձի կողմից իր կրոնական համոզմունքները արտահայտելը կարող է սահմանափակվել, եթե պետությունը նպատակ է հետապնդում պաշտպանելու մարդու այլ իրավունքները և հիմնարար ազատությունները, ինչպես նաև պահպանել հավասարություն և բացառել խտրականության դրսևորումները: Միևնույն ժամանակ, այդ սահմանափակումը պետք է կատարվի բացառապես օրենքի հիման վրա և չխախտի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը¹⁶: Բացի այդ, պետության միջամտությունը պետք է հետապնդի իրավական նպատակ, լինի «սահմանված օրենքով» և «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»¹⁷:

¹² St´u Jim Murdoch, Protecting the rights of freedom of thought, conscience and religion under the European Convention on Human Rights, p. 16// Council of Europe Human Rights handbooks, Council of Europe, Strasbourg, 2012:

¹³ St´u Overview of the Court’s case-law on freedom of religion // Research division, Council of Europe, էջ 8, պարագրաֆ 16:

¹⁴ St´u TÜRMEEN, R., նշվ. աշխ., էջեր 591-600:

¹⁵ St´u St´u Kokkinakis v. Greece, Application no. 14307/88, 25 May 1993, §33:

¹⁶ St´u Human Rights Comm, General comment No. 22: The Right to Freedom of Thoughts, Conscience and religion (Art. 18), կետ 9 // UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add/4 (July 30, 1993), <http://www.refworld.org/docid/453883fb22.html>:

¹⁷ St´u Jim Murdoch, Protecting the rights of freedom of thought, conscience and religion under the European Convention on Human Rights, էջ 35 // Council of Europe Human Rights handbooks, Council of Europe, Strasbourg, 2012; Human Rights Comm, General comment No. 22: The Right to Freedom of Thoughts, Conscience and religion (Art. 18), կետ 8-9 // UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add/4 (July 30, 1993), <http://www.refworld.org/docid/453883fb22.html>:

Միջամտությունը հետապնդում է իրավական նպատակ, եթե դատելի է ունեցել հասարակական անվտանգությունը կամ հասարակական կարգը, առողջության, կամ բարոյականության, կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար¹⁸: Ընդ որում, միջամտությունը չի հետապնդում իրավական նպատակ, եթե դատելի է ունեցել ազգային անվտանգությունը ապահովելու նպատակներից էլնելով¹⁹:

Ինչ վերաբերում է «օրենքով սահմանված» միջամտությանը, ապա դա նշանակում է, որ ներպետական օրենսդրությունը պետք է լինի հստակ, հասանելի և կանխատեսելի, ինչպես նաև պետք է պաշտպանի այդ օրենքի կամայական կիրառելիությունից²⁰: Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է անտեսել այն, որ միջամտությունը «սահմանված է օրենքով» եթե համարի, որ նման միջամտությունը չի եղել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»²¹:

Անհրաժեշտությունը ստուգելու համար Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ուշադրություն է դարձնում արդյոք այդ միջամտության համար առկա է հասարակական սուր պահանջ, արդյոք միջամտության եղանակը համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին և արդյոք միջամտությունը հիմնավորվել է վերաբերելի ու բավարար հիմքերով (*ռացիոնալական կապը միջոցի ու նպատակի միջև*)²²:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումների մեջ նշում է, որ յուրաքանչյուր անձ պետք է գիտակցի և ընդունի այն փաստը, որ իր կրոնական համոզմունքները կարող են դառնալ քննադատության առարկա, սակայն կարևոր է նաև, թե ինչ տեսքով է քննադատվում այս կամ այն կրոնը: Նման դա-

¹⁸ Տե՛ս Jim Murdoch, նշվ. աշխ., էջ 35:

¹⁹ Տե՛ս Bayatyan v. Armenia, Application no 23459/03, 7 July 2011:

²⁰ Տե՛ս, օրինակ՝ Case of Hasan and Chaush v. Bulgaria, Application no 30985/96, 26 October, 2000; Bayatyan v. Armenia, Application no. 23459/03, 7 July 2011, §§112-128:

²¹ Տե՛ս, օրինակ՝ Case of Buscariani and others v San Marino, Application no 24645/94, 18 February 1999:

²² Տե՛ս Association Rhino and Others v. Switzerland, Application no 48848/07, § 62, 11 October 2011; Biblical Center of the Chuvash Republic, Application no 33203/08, § 54, 13 October 2014:

տողությունները չպետք է խանգարեն անձին ազատորեն իրացնել իր դավանանքը²³:

Կարևոր է նաև, որ կրոնական համոզմունքները արտահայտելու հարցում պետությունները պետք է լինեն չեզոք և անկողմնակալ: Բացի այդ, 2007 թվականին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունվել է թիվ 1580 (2007) բանաձևը, որի նպատակն է նախազգուշացնել կրոնի դոկտորինացման միտումների մասին²⁴: Այդ բանաձևով Խորհրդարանական վեհաժողովը կոչ է անում պետություններին պաշտպանել և նպաստել գիտական տեսությունների տարածմանը և ուսուցանմանը, ինչպես նաև թույլ չտալ, որ կրեացիոնիզմը ուսուցանվի որպես գիտական առարկա Էվոլյուցիայի հետ հավասար:

Ըստ ՄԻԵԿ-ի և ՔՔԻՄԴ-ի հայերեն տարբերակների՝ կրոնական համոզմունքները արտահայտելու միջոցներ են հանդիսանում քարոզչությունը, արարողությունները, պաշտամունքը և ծեսերը: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հայերեն լեզվով թարգմանված տեքստի մեջ երբեմն՝ «քարոզչություն», իսկ մեկ այլ տարբերակում՝ «*worship*» բառը թարգմանվում է որպես «ժամերգություն»: ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի թարգմանված տարբերակում այդ բառը թարգմանված է որպես «պաշտամունք»: Կարծում ենք, «*worship*» տերմինը սահմանելու համար պետք է օգտագործել «երկրպագում», կամ «պաշտամունք» բառերը, քանի որ հենց այդ բառերն են արտահայտում «*worship*» բառի նշանակությունը: Սակայն Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունների ուսումնասիրությունը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներից հետևում է, որ նման թարգմանությունը սխալ է հետևյալ պատճառաբանությամբ:

Ըստ Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունների 4-րդ կետի՝ կրոնական համոզմունքները երկրպագելու (պաշտամունքի) միջոցով արտահայտելը իր մեջ պարունակում է արարողակարգերին մասնակցելը, այդ թվում նաև արարողությունների

²³ Sté u Otto-Preminger-Institut v. Austria, 20 September 1994, Series A, Application no. 295:

²⁴ Sté u Council of Europe Parliamentary Assembly Resolution 1580 (2007), The dangers of creationism in education // <http://assembly.coe.int/Main.asp?link=%2FDocuments%2FAdoptedText%2Fta07%2FERES1580.htm#1>:

անցկացման շինություններ և վայրեր կառուցելը²⁵, արարողակարգերի կանոններից և առարկաներ օգտագործելը, խորհրդանիշներ օգտագործելը: «Երկրպագելու» (պաշտամունքի) միջոց է հանդիսանում նաև կրոնական տոներին և օրերին հետևելու հանգիստը²⁶:

«*Observance*» և «*practice*» բառերը հայերեն «*պահպանում*» (հետևող լինել) և «*պրակտիկա*» (կատարել) համապատասխանաբար, և դրանք կարող են լինել ոչ միայն արարողությունների միջոցով, այլև այնպիսի սովորույթների միջոցով ինչպիսիք են հատուկ դիետաներ պահպանելը, հագուստ հագնելը²⁷, տարիքային սահմանափակումներ ունեցող անձանց մասնակցությունը կոնկրետ ծեսերին, ինչպես նաև խմբի կողմից հատուկ լեզու օգտագործելը²⁸:

Նետաքրքրական է, որ Մարդու իրավունքների կոմիտեն և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կրոնական համոզմունքները «պահպանելու» միջոցով արտահայտելու մասին հայտնել են տարբեր կարծիքներ: Խոսքը վերաբերում է Ֆրանսիայի կողմից 2004 թվականին ընդունված օրենքին, որով արգելվել է տարրական և միջին դասարաններում, ինչպես նաև բուհերում կրել կրոնական համոզմունքները արտահայտող խորհրդանիշներ և հագուստներ հագնելը:

2008 թվականին Մարդու իրավունքների կոմիտեն գտել է, որ Ֆրանսիան չի ապացուցել նման սահմանափակման անհրաժեշտությունը, ինչպես նաև չի ապացուցել, որ դիմումատուն հագնելով այդ գլխի հարդարանը խախտել է այլ աշակերտների իրավունքները: Կոմիտեն նշել է նաև, որ դպրոցի տնօրինությունը հաշվի չի առել դիմողի հատուկ կարիքները և իր դեպքին բնորոշ հանգամանքները: Կոմիտեն գտել է, որ աշակերտներին իրենց կրոնական համոզմունքները

²⁵ St´u The Church Of Jesus Christ Of Latter-Day Saints V. The United Kingdom, Application No. 7552/09, 04/06/2014.

²⁶ St´u Kostas v. The Former Yugoslav Republic of Macedonia, Application no 55170/00, 13 July 2006; Human Rights Comm, General comment, Application no 22: The Right to Freedom of Thoughts, Conscience and religion (Art. 18), կետ 4 // UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add/4 (July 30, 1993), <http://www.refworld.org/docid/453883fb22.html>:

²⁷ St´u Leyla Sakhin v Turkey, Application no. 44774/98 , Dahlab v. Sweserland, Application No 42393/98, 15 Februaty 2001:

²⁸ St´u Human Rights Comm, General comment No. 22: The Right to Freedom of Thoughts, Conscience and religion (Art. 18), կետ 4 // UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add/4 (July 30, 1993), <http://www.refworld.org/docid/453883fb22.html>:

արտահայտելու պատճառով դպրոցից հեռացնելը հանդիսանում է անհամաչափ և ոչ անհրաժեշտ միջոց և արձանագրել է կրոնի ազատության խախտում²⁹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան նույն խնդրի կապակցությամբ ներկայացվել են թվով վեց գանգատներ³⁰, սակայն դատարանը՝ հաշվի առնելով իր կողմից Դորգուն ընդդեմ Ֆրանսիայի³¹ և Կերվանչին ընդդեմ Ֆրանսիայի³² գործերը, այդ գանգատները ճանաչել է անընդունելի: Այդ գործերով դատարանը նշել է, որ պետության հայեցողության ներքո է գտնվում՝ հաշվի առնելով բազմակարծության սկզբունքը և այլ անձանց իրավունքները, սահմանափակել կրոնական համոզմունքները արտահայտելու իրավունքը, որպեսզի դա չհանդիսանա ճնշման և մեկուսացման պատճառ³³: Դատարանը նաև հղում է կատարել աշխարհագիտության սկզբունքի վրա՝ նշելով որ դա «սահմանադրական սկզբունք է, և Հարնապետության հիմնադիր սկզբունք, որին հետևում է պետության բնակչությունը, և որի պահպանումը ունի հիմնական նշանակություն, մասնավորապես դպրոցներում»³⁴:

Կրոնական համոզմունքները «պրակտիկայի» և «ուսուցման» միջոցով արտահայտելը անմիջական կապի մեջ է կրոնական կազմակերպությունների կողմից իրենց հիմնական գործունեությունը իրականացնելու հետ: «Պրակտիկայի» և «ուսուցման» տեսակներ կարող են հանդիսանալ անձանց կողմից կրոնական առաջնորդներին, քահանաներին և ուսուցիչներին ընտրելը, կրոնական թեմայով դասընթացներ կամ կրոնական դպրոցներ հիմնադրելը, ինչպես նաև կրոնական թեմայով գրականություն պատրաստելը³⁵: Դավանախոսությունը, կամ քարոզչությունը (երբ կրոնական կազմակերպությունների

²⁹ Sté u Bikramjit Singh v. France, Human rights committee, Communication No. 1852/2008:

³⁰ Sté u Ranjit Singh v. France and Jasvir Singh v. France (կեսկի հագնող աշակերտներ) և իսլամ դավանող աշակերտների 4 գանգատներ. Aktas v. France, Bayrak v. France, Gamaleddyn v. France and Ghazal v. France:

³¹ Sté u Dorgu v France, Application no 27058/05, 04 March 2009:

³² Sté u Kervanci v France, Application no 31645/04, 04 December 2008:

³³ Sté u Dorgu v France, Application no 27058/05, 04 March 2009, § 71:

³⁴ Sté u Dorgu v France, Application no 27058/05, 04 March 2009, § 72:

³⁵ Sté u Human Rights Comm, General comment No. 22: The Right to Freedom of Thoughts, Conscience and religion (Art. 18), կես 4 // UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add/4 (July 30, 1993), <http://www.refworld.org/docid/453883fb22.html>:

անդամներ փորձում են տարածել իրենց կրոնական համոզմունքները և ներգրավել նոր անդամներ) նույնպես հանդիսանում է կրոնական համոզմունքները ուսուցանելու տեսակ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումների մեջ «քարոզչության» մասին խոսելիս օգտագործում է «*proselytism*» բառը³⁶, և քարոզչությունը ընդունում է որպես կրոնական համոզմունքները **ուսուցանելու** միջոցով արտահայտելու տեսակներից մեկը: Ընթանաբար, կրոնական համոզմունքները քարոզելու մասին խոսելիս միջազգային իրավունքում ընդունվե՞ծ է օգտագործել «*proselytism*» բառը³⁷:

Կրոնական համոզմունքները քարոզելու ազատության հետ կապված Դատարանը ունի մի քանի գործ ընդդեմ Հունաստանի³⁸, որտեղ նշվում է, որ «ոչ պատշաճ քարոզչությունը» (կամ «*ոչ իրավաչափ քարոզչությունը*»), ինչպիսին է կրոնական կազմակերպություն նոր մարդկանց ներգրավելու նպատակով *նյութական կամ սոցիալական առավելություն ստանալու խոստումներ տալը, կամ անձի նկատմամբ ճնշում գործադրելը*, չի պաշտպանվում Կոնվենցիայի 9-րդ հոդվածով³⁹: Լարիսիս և այլոք ընդդեմ Հունաստանի գործում քննարկվել է երեք անձանց բողոքը, որտեղ մեկը եղել է զինծառայող, իսկ երկուսը՝ Հունաստանի քաղաքացիներ: Դատարանը, որպեսզի պարզի, թե արդյոք պետությունը խախտել է անձի՝ իր կրոնական համոզմունքների իրավունքը, տարանջատել է զինծառայողներին սովորական քաղաքացիներից, և վերադաս զինվորի կողմից ստորադաս զինվորներին դավանախոսության սահմանափակումը պետության կողմից ճանաչել է իրավաչափ: Մնացյալ դիմողների մասով, ովքեր եղել են սովորական քաղաքացիներ, Դատարանը արձանագրել է խախտում՝ նշելով, որ կոնկրետ այս գործի շրջանակներում, չնայած որ դավանա-

³⁶ St´u Kokkinakis v. Greece, Application no. 14307/88, 25 May 1993:

³⁷ St´u Tad Stahnke, Proselytism and the Freedom to Change Religion in International Human Rights Law // Brigham Young University Law Review, 8 Jan, 2001, էջեր 251-344, <http://www.law2.byu.edu/lawreview/archives/1999/1/sta.pdf>; Venice Commission. Joint opinion on the draft law on freedoms of conscience and religion etc. // Strasburg 7 October 2011 , http://www.religions.am/eng/articles/venice-commission_-joint-opinion-on-the-draft-law-on-freedoms-of-conscience-and-religion-etc/:

³⁸ St´u Kokkinakis v. Greece Application no. 14307/88, 25 May 1993; Larissis and Others v. Greece, Application no(s) 23372/94, 26377/94, 26378/94, 24 February 1998, § 45:

³⁹ Larissis and Others v. Greece, նույն տեղը:

խոսության օբյեկտ դարձած քաղաքացիները ունեցել են անձնական խնդիրներ, միևնույն է նրանց վրա որևէ ճնշում չի գործադրվել, և չեն կիրառվել արգելված միջոցներ:

Կարծում ենք, քաղաքացիների դեպքում «ոչ պատշաճ քարոզչություն» իրականացնելը ապացուցելու համար անհրաժեշտ է ներկայացնել շատ լուրջ փաստարկներ, ինչը պահանջում է ծավալուն աշխատանք և հետազոտությունների կատարում: Մակայն եթե պետությունները ցանկանում են պաշտպանել իրենց քաղաքացիներին նման քարոզչությունից, ապա պետք է ոչ թե խոչընդոտեն որոշ կրոնական կազմակերպությունների գործունեությունը, այլ ժողովրդին տրամադրեն համապատասխան կրթություն և տեղեկություններ աշխարհում առկա կրոնների մասին: Բհարկե, այդ տեղեկությունները պետք է լինեն օբյեկտիվ, չպարունակեն ատելության խոսքեր, և պետությունը այստեղ պետք է կրկին լինի օբյեկտիվ և անկողմնակալ:

Որպես եզրակացություն կարելի է ասել, որ մտքի, խղճի և կրոնի ազատությունը յուրաքանչյուրի անձնական իրավունքն է, և Կոնվենցիան երաշխավորում է նաև յուրաքանչյուր անձի իրավունք՝ փոխել իր դավանանքը, սակայն իր կրոնական համոզմունքները փոխելու պատճառ չպետք է լինի այլ անձանց կողմից ճնշում գործադրելը⁴⁰:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բայաթյանի գործի մեջ նշել է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասի պաշտպանության ներքո է գտնվում նաև համոզմունքի հիմքով պարտադիր զինձառայությունից ազատվելու իրավունքը⁴¹:

Խղճի և կրոնի ազատությունը համարվում է ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկը, ինչպես նաև անձանց ինքնությունը, կյանքի հայեցակարգերը որոշող կարևոր տարր⁴²:

Մակայն պետք չէ մոռանալ, որ տարբեր երկրներում, տարբեր ազգեր և մարդկանց խմբեր ցուցաբերում են տարբեր մոտեցումներ կրոնի հանդեպ: Բացի այդ, ոչ բոլոր ժողովուրդները և ոչ բոլոր պետությունների բնակչությունն է տիրապետում այլ կրոններին վերաբերող տեղեկություններին: Դա վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետության բնակչությանը, ովքեր վախենում են այլ կրոնական

⁴⁰ St' u Kokkinakis v. Greece, Application no. 14307/88, 25 May 1993, § 17-19:

⁴¹ St' u Bayatyan v. Armenia, Application no. 23459/03, 7 July 2011, § 110:

⁴² St' u Overview of the Court's case-law on freedom of religion // Research division, Council of Europe, § 7:

կազմակերպությունների ներկայացուցիչներից և նրանց ընդունում են որպես թշնամի:

Հենց այդ պատճառով էլ համարում ենք, որ յուրաքանչյուր անձի մտքի, խղճի և կրոնի ազատությունը ապահովելու հետ մեկտեղ պետք է նաև իրազեկել հասարակությանը կրոնական բազմազանության մասին, այդ կրոնական կազմակերպությունների գործունեության, նրանց փիլիսոփայական մոտեցումների մասին:

Խղճի և կրոնի ազատության մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ անհրաժեշտ է առաջին հերթին վերացնել այն թարգմանչական սխալները, որոնք առկա են Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային փաստաթղթերի հայերեն տարբերակում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի մեջ, ինչը կօգնի անցնել «մարդու իրավունքների սոցիալիզացման ողջ ճանապարհը»⁴³:

Ани Агагюлян

аспирант кафедры Европейского и международного права ЕГУ

**СВОБОДА ВЫРАЖЕНИЯ РЕЛИГИОЗНЫХ УБЕЖДЕНИЙ
В СООТВЕТСТВИИ С МЕЖДУНАРОДНЫМ ПАКТОМ О
ГРАЖДАНСКИХ И ПОЛИТИЧЕСКИХ ПРАВАХ И
ЕВРОПЕЙСКОЙ КОНВЕНЦИЕЙ О ЗАЩИТЕ ПРАВА
И ОСНОВНЫХ СВОБОД ЧЕЛОВЕКА**

Данная статья посвящена свободе мысли, совести и религии, как одной из основных прав и свобод человека. Автор анализирует статьи 9 Европейской конвенции по правам человека, статьи 18-го Международного пакта о гражданских и политических правах, решений Комитета по правам человека ООН и Европейского суда по правам человека и выражает свою точку зрения относительно ограничений свобода религии.

⁴³ See Christopher Marsh and Daniel P. Payne, *The Globalization of Human Rights and the Socialization of Human Rights Norms*:

**FREEDOM OF RELIGION ACCORDING TO THE
INTERNATIONAL COVENANT ON CIVIL AND POLITICAL RIGHTS
AND THE EUROPEAN CONVENTION ON PROTECTION OF HUMAN
RIGHTS AND FUNDAMENTAL FREEDOMS**

The article studies freedom of thought, conscience and religion, as one of human rights and fundamental freedoms. The author analyses Article 9 of European convention on protection of human rights and fundamental freedoms, Article 18 of International covenant on Civil and political rights, decisions on UN Human Rights Committee and European court on human rights and expresses her opinion on restrictions on freedom of religion.

Բանալի բառեր՝ Մտքի, խղճի և կրոնի ազատություն, մտքի, խղճի և կրոնի ազատության ներքին (*forum internum*), կամ «պասիվ» կողմը, մտքի, խղճի և կրոնի ազատության արտաքին (*forum externum*), կամ «ակտիվ» կողմը, մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանափակման պատճառները:

Ключевые слова: Свобода мысли, совести и религии, внутренняя (*forum internum*), или пассивная сторона свободы мысли, совести и религии, внешняя (*forum externum*), или активная сторона свободы мысли, совести и религии, причины ограничения свободы мысли, совести и религии.

Key words: Freedom of thought, conscience and religion, internal (*forum internum*), or «passive» part of freedom of thought, conscience and religion, external (*forum externum*), or «active» part of freedom of thought, conscience and religion, freedom of thought, conscience and religion restriction reasons.